№ 79 Մայիսի 18 Շաբաթ

1883

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Մայիսի 18 Շաբաթ № 79

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թագաւոր Կայսրի թաղադրութիւնը։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ուսուցչի անձնաւորութիւնը։

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ԹԱԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Մայիսի 15-ին կատարվեցաւ Մոսկվայում այն մեծ հանդէսը, որին ամբողջ Ռուսաստանը սպասում էր անհամբերութեամբ։ Թագաւոր Կայսրը և Նրա Ամուսինը թաղադրվեցան։

Այդ լուրը լցրեց ամբողջ Ռուսաստանը ուրախութեան զգացմունքով։ Մեր Թիֆլիսն էլ այդ ուրախալի լուրը իմանալուն պէս, զարդարվեց դրօշակներով և մի քանի օր շարունակ ժողովուրդը անպատմելի ուրախութեան մէջ անց ու դարձ էր անում փողոցներում, բարձր կեցցէներ արձակելով։

Միւս օրը Երևանեան հրապարակի վրա, բոլոր բարձր աստիճանաւորների, քաղաքի ներկայացուցիչների և խուռն բազմութեան ներկայութեամբ ամեն դաւանութիւնների եկեղեցականները մաղթանքներ կատարեցին։ Այնուհետև ամբողջ օր զինուորական երաժշտութիւն էր ածում այգիում և հրապարակներում։

Կատարվեցաւ այն մեծ խորհուրդը, որին սպասում էր անհամբերութեամբ ամեն ռուսահպատակ,—մենք ռուսահայերս էլ միացնում ենք մեր միւս համաքաղաքացիների մաղթանքների հետ և մեր մաղթանքները օծեալ թագաւորի երկարակեցութեան համար, յիշելով նոյնպէս և այն, որ Նա ժառանգ է այն Կայսրի, որ առաջին անգամ յարուցեց Թիւրքիահպատակ մեր եղբայրների բարօրութեան խնդիրը։

Այստեղ աւելորդ չենք համարում մէջ բերել „Արձագանք“ շաբաթաթերթի առաջնորդող յօդուածի վերջին խօսքերը, կատարված թաղադրութեան առիթով։

Մինչդեռ մեծահանդէս օծնախմբութեամբ կատարվում է մեծ ինքնակալի թաղադրութիւնը, մինչդեռ ամբողջ Ռուսիան մաղթում է որ Աստուծու օծեալը շարունակող և կատարող լինի Իր նախահայրց աւանդած մեծահռչակ գործերի, մինչ մենք աղօթում ենք որ Տէրը հզօրացնէ Իր Ընտրեալին Իր բարի դիտաւորութեանց մէջ յօգուտ մարդկութեան և Իր գահի հովանաւորութեան տակ եղած ազգերի,—հեռու, Ցաճկա-Հայաստանի խորքերից ևս մի ձայն է լսվում. աղօթք է նա և մրմունջ,—դա Թիւրքահայոց ձայնն է։ Հարատահարված Թիւրքահայը կը մտաբերէ այսօր իր վաղթար դրութիւնը և հառաչելով լռիկ ծնկիկ կը հեռանայ, կը քաշվի իր կիսախարխուլ եկեղեցին աղօթելու։

Գ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 2 մայիսի

Լօրդ Տըֆրէնի Պոլիս հասնելն ի վեր Հայաստանի հարցն է որ դրաւած է ընդհանուր ուշադրութիւն։ Լօրդը առանձին տեսակցութիւններ ունեցաւ Սուլթանի հետ և այդ տեսակցութեանց նիւթն միայն Հայաստանի բարեկարգութեանց խնդիրն եղած կը թուի։ Սակայն մինչև այսօր ոչինչ ստոյգ կը գիտցուի թէ ինչ խօսուած է, ինչ պատասխան ընդունուած։ Կը կարծեմ թէ մի քանի օրէն հաղիւ կրնանք այդ տեղեկութիւնները ձեռք բերել, եթէ կարելիութիւն կայ։ Ա՛ռ այժմ ամենէն աւելի խօսուածը այս է որ՝ Անգղիոյ դեսպանը հզօր կերպով հակցուցեր է սուլթանին թէ՝ ինչ վտանգներ կան Թիւրքիոյ կայսրութեան համար եթէ Հայաստան այս վիճակին մէջ մնայ։ Դեսպանը վերջնական պատասխան մը ուզեր է սուլթանէն գիտնալու համար որ բարեկարգութիւնները շուտով պիտի իրագործուին թէ ոչ, որպէս զի Անգղիա ալ ըստ այնմ ընելիքը գիտնայ։—Թէ ինչ պատասխան է տուեր սուլթանը, դա յայտնի չէ։

Ինչպէս կը տեսնէք եւրոպական թերթերէն, այժմ մեր գործը իբր եւրոպական խնդիր մը ուշադրութիւն կը դրաւէ ամբողջ եւրոպական մամուլին։ Անգղիոյ հետեւելիք ընթացքին, ունեցած նպատակներու մասին կարծիքները շատ բաժնուած են։ Հոս մեր մէջն ալ կրնանք ըսել որ երկու մեծ բաժանում կայ, որոց յայտնած զանազան կարծիքները կատարելապէս կը համաձայնին եւրոպական լրագիրներու տեսակ տեսակ կարծիքներու։ Երբ կը լսէք որ Պոլիս այս ինչ խնդրոյ վրա այս ինչ կարծիքը կայ, մի հետացնէք թէ լրագիրներու համար կը խօսինք։ Հայերէն լրագիրներէն ոչինչ կայ։—Արդ մեր մէջը տիրապետող մէկ կարծիքը այն է թէ՝ Անգղիական շահերը կը պահանջեն մեր Հայաստանին Թիւրքաց իշխանութիւնէն չանջատուիլը, այլ բարեկարգուելով անոր գերիշխանութեան ներքև մնայ և թէ այս նպատակին համար կաշխատի Անգղիոյ կառավարութիւնը։ Իսկ միւս մասը, որոյ պարագլուխ են մանաւորապէս Դրան հայ էֆէնդիները, կը պընդեն որ՝ Անգղիա բոլորովին Հայաստանէն ձեռք քաշելու տրամադիր է, եթէ աղատականք պաշտօնի վրայ մնան։

Եթէ Անգղիա այժմ կը պնդէ, կըսեն Հայաստանի բարեկարգութիւններուն համար, իր նպատակը ոչ այլ ինչ է բայց երկիւղ ազդելով Դրան ուրիշ տատ զարգացման մէջ, իր աւանդած առարկայի շրջանին պատկանող առարկաների իրագործման մէջ, և վերջապէս՝ այն հմտութիւնների մէջ, որ նա ունի կանոնաւոր ուսուցման և դաստիարակութեան գիտութեան մասին։

Մասնաւորի կողմից, գործի լաւ ընթացքի համար, պէտք է նկատել և այն, որ ուսուցիչը պիտի ունենայ լաւ լեզու։ Լեզուն է՝ որով ուսուցիչը հաղորդում է աշակերտներին հարկաւորը։ Պարզ բան է, որքան լաւ լինի գործիքը, միջոցը, այնքան և լաւ կը լինի արդիւնքը, և ընդհակառակն։ Աւելորդ և անհասկանալի բառեր միանգամայն չը պիտի լինեն դասաւանդութեան ժամանակ։ Շտապելը և մի մաքից միւսին անկապ կերպով միասին անցնելը, կը դժուարացնէ աշակերտներին հասկանալու դասի մինչև անգամ էական մասը։ Դանդաղկոտութիւնը կարող է աշակերտներին յոգնեցնել. ցածր խօսելը ևս իր վատ հետևանքները ունի։ Ուսուցիչը պիտի աշխատէ, որ իր լեզուն լինի ճիշտ, պարզ, երեխաներին հասկանալի։ Աւելորդ է խօսել քերականական ճշդութիւնների վրա *)։

Հսկայական նշանակութիւն ունի այն բանը թէ ինչ եռանդով է վերաբերում ուսուցիչը դէպի իր գործունէութիւնը։ Այստեղ մեծ նշանակութիւն ունի այն բանը, թէ արդեօք ուսուցիչը ոգևորված է իր գործով, թէ սառնասիրտ է դէպի իր գործը։ Ոչոք չէ կարող լաւ բան յառաջ բերել, եթէ գործին սրտով չէ ձեռնարկում, և եռանդով չէ առաջ տանում։ Ուսուցչի սառնասրտութիւնը հէնց իր վրա վատ ներգործութիւն է ունենում։ Եռանդուն ջանքերից յետոյ արդիւնքը, աշակերտների յաջողութիւնը բազմապատկում է ուսուցչի ջանքերը, սէրը, եռանդը։ Անտարբերութեան, սառնութեան հետևանքը անբաւարար է, որը ուսուցչին պատճառում է սրտնեղութիւն, անբաւականութիւն։ Եւ այս շատ բընական է։

*) Գործնականութիւն—la pratique, практика.

*) Այստեղ չենք կարող չը յիշել այն իրողութիւնը, թէ որքան լեզուի կողմից մեր ուսումնարաններում ցաւալի երևոյթները սովորական են։ Ամենքին յայտնի կը լինի թէ որքան մեր ուսումնարանների մէջ հայ ուսուցիչները անհոգ են դէպի մայրենի լեզուի հմտութիւնը։ Եւ շատ կան այնպիսիք, որոնք հայերէնի մէջ իրանց թուլութիւնը մի սովորական բան են համարում։

Խ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ *)

—

Ուսուցման կենդանութիւնը, ուսումնարանի մէջ կարգապահութեան գործը, աշակերտների վրա եղող ազդեցութիւնները անկասկած պայմանաւորվում են ուսուցչի անձնաւորութեամբ։ Ինչքան որ լաւ չը լինեն ուսումնարանի արտաքին հանգամանքները, ինչքան որոշ և արժանաւոր չը լինեն նրա կանոնները և ծրագիրը, այնուամենայնիւ աշակերտների կրթութեան և դաստիարակութեան գործի յաջողութիւնը կախված է ուսուցչից։ Արդիւնքը ցանկալի չէ կարող լինել, եթէ ուսուցիչը վատ է, եթէ նա իր կոչման անարժան է։ Ուսուցիչը—ուսումնարանի հոգին է. նա է որ տալիս է վերջինին կեանք։

Այժմ խնդիր է, թէ ինչպիսի պահանջների նայութիւն պիտի տայ, և ինչպիսի յատկութիւններ պիտի ունենայ ուսուցիչը։

Նախ այսքանը հարկաւոր է ասել, որ անհիմն կը լինի պահանջել. ցանկանալ որ ուսուցիչները իրանց մտաւոր և հոգեկան բոլոր կողմերով որոշ սահմանների մէջ սահմանափակվեն։ Ամենայն մարդ իր անհատականութիւնը ունի։ Ուրեմն խօսելով ուսուցչի անձնաւորութեան մասին, պէտք է բաւականանալ ցոյց տալով այն կէտերը, որոնք անհրաժեշտ են, և կամ թէ կարևոր դաստիարակութեան և կրթութեան յաջողութեան համար։ Եւ այս կէտերին, այդ պահանջներին իրաքանչիւր ուսուցիչ, որոշ չափով պէտք է համապատասխանէ։—Անհատականութեան առանձնայատկութիւնների վերաբերութեամբ այսքանը պէտք է ասել, որ եթէ դրանք նպաստում են ուսուցման և դաստիարակութեան յաջող ընթացքին,—այն ժամանակ նրանք արժանաւորութիւններ կարող են համարվել ուսուցչի համար. հակառակ դէպքում դրանք կը լինեն ուսուցչի համար պակասութիւններ և միշտ արգելք կը լինեն գործի յաջողութեան։

Գալով բուն խնդրին պէտք է ասել, որ ուսուցչի անձնաւորութեան վերաբերեալ պահանջները երկու տեսակ են, մէկը՝ իբրև մարդու, միւսը՝ իբրև դաստիարակութեան և կրթութեան գործին ծառայող անձնաւորութեան։

Առաջին պահանջով որոշվում է որ ուսուցիչը լինի լաւ յատկութիւնների տէր, այնիւ, բարոյական մարդ։ Ուսուցիչը օրինակ պիտի լինի աշակերտների համար, իսկ լաւ օրինակ լինելու համար, նա պիտի լաւ յատկութիւններ ունենայ, և ինքն ուսուցիչը պէտք է իր մէջ ունենայ այն բոլոր յատկութիւնները, որոնց նա կամենում է տեսնել և իր աշակերտների մէջ։ Առանց այս մեծ պայմանի դաստիարակութիւնը աներևակայելի է։ Այստեղ դիմակաւորվել անկարելի է։ Կեղծելը—ինքն ըստ ինքեան մեծ չարիք է։—Ենթադրելով թէ պարզ կը լինի շատերի համար այն հարցը, թէ ուսուցիչը՝ իբրև մարդ, ինչ յատկութիւններ պիտի ունենայ, անցնենք միւս մասին, որոշելու համար այն պահանջները, որոնց պիտի լիութիւն տայ ուսուցիչը, իբրև ուսուցանող և դաստիարակող։

Ուսուցանելու և դաստիարակելու համար պէտք է որոշ նախապատրաստութիւն ունենալ։ Անկարելի է առաջ տանել մի այսպիսի գործ, որին մարդ անծանօթ է, կամ չը գիտէ թէ ինչ ճանապարհներով պէտք է առաջ գնալ, և որոնք են միջոցները։

Կարծել որ ուսուցչի համար աւելորդ է սկզբից նախապատրաստվելը, այլ նա ամեն բան գործունէութեան մէջ կարող է ձեռք բերել, նոյն է կարծել թէ՝ բժշկին աւելորդ է սկզբից պատրաստուելը, և գործնականութեան *) մէջ նա կարող է կարևոր դիտելիքները ձեռք բերել։ Ինչպէս վտանգաւոր է չը նախապատրաստված բժշկին հիւանդ յանձնել, այնպէս և վտանգաւոր է չը նախապատրաստված ուսուցչին յանձնել կրթութեան գործը։

Ընդհանրապէս ասելով ուսուցչի նախապատրաստութիւնը կայանում է ընդհանուր, հատուկ զարգացման մէջ, իր աւանդած առարկայի շրջանին պատկանող առարկաների իրագործման մէջ, և վերջապէս՝ այն հմտութիւնների մէջ, որ նա ունի կանոնաւոր ուսուցման և դաստիարակութեան գիտութեան մասին։

Մասնաւորի կողմից, գործի լաւ ընթացքի համար, պէտք է նկատել և այն, որ ուսուցիչը պիտի ունենայ լաւ լեզու։ Լեզուն է՝ որով ուսուցիչը հաղորդում է աշակերտներին հարկաւորը։ Պարզ բան է, որքան լաւ լինի գործիքը, միջոցը, այնքան և լաւ կը լինի արդիւնքը, և ընդհակառակն։ Աւելորդ և անհասկանալի բառեր միանգամայն չը պիտի լինեն դասաւանդութեան ժամանակ։ Շտապելը և մի մաքից միւսին անկապ կերպով միասին անցնելը, կը դժուարացնէ աշակերտներին հասկանալու դասի մինչև անգամ էական մասը։ Դանդաղկոտութիւնը կարող է աշակերտներին յոգնեցնել. ցածր խօսելը ևս իր վատ հետևանքները ունի։ Ուսուցիչը պիտի աշխատէ, որ իր լեզուն լինի ճիշտ, պարզ, երեխաներին հասկանալի։ Աւելորդ է խօսել քերականական ճշդութիւնների վրա *)։

Հսկայական նշանակութիւն ունի այն բանը թէ ինչ եռանդով է վերաբերում ուսուցիչը դէպի իր գործունէութիւնը։ Այստեղ մեծ նշանակութիւն ունի այն բանը, թէ արդեօք ուսուցիչը ոգևորված է իր գործով, թէ սառնասիրտ է դէպի իր գործը։ Ոչոք չէ կարող լաւ բան յառաջ բերել, եթէ գործին սրտով չէ ձեռնարկում, և եռանդով չէ առաջ տանում։ Ուսուցչի սառնասրտութիւնը հէնց իր վրա վատ ներգործութիւն է ունենում։ Եռանդուն ջանքերից յետոյ արդիւնքը, աշակերտների յաջողութիւնը բազմապատկում է ուսուցչի ջանքերը, սէրը, եռանդը։ Անտարբերութեան, սառնութեան հետևանքը անբաւարար է, որը ուսուցչին պատճառում է սրտնեղութիւն, անբաւականութիւն։ Եւ այս շատ բընական է։

*) Գործնականութիւն—la pratique, практика.

Կրթութեան գործը այնքան մեծ, և այնքան սրբազան է, որ իրաքանչիւրը նախ քան ոտք կոխելը այս ասպարիզի վրա, պէտք է ինքը իրան իր ոյժերի համար հաշիւ տայ։ Գործին ձեռնարկելուց յետոյ ուսուցիչը պիտի ջանայ՝ որ քանի առաջ, այնքան իր ոյժերը և եռանդը մեծանան։ Այս բանին կարող են նպաստել՝ աշակերտների—մանուկների բնաւորութեան ուսումնասիրութիւնը, լաւ մտքերի մշակութիւնը, յարմարաւոր և արժանաւոր գրուածքների ընթերցանութիւնը, և վերջապէս ոչնչացնելը այն բոլորպայմանների, որոնք կարող են ուսուցչին իր լաւ ընթացքից չեղել։

Ամենամեծ պայմանը՝ ուսուցչի դէպի իր գործը ունեցած յարաբերութեան որպիսութեան, է այն սէրը, որ նա ունի դէպի մանուկները, դէպի աշակերտները։ Այդ սէրը պիտի սրտաբուղխ լինի, պիտի տարածվի բոլոր աշակերտների վրա։ Այդ սէրը պիտի լինի ի հարկէ խելացի։ Անկեղծ սէր ունենալ դէպի աշակերտները, դեռ չէ նշանակում «երես տալ» նրանց։ Անկեղծ սէրը ուղղված է և դէպի ապագան, և ջանք է գործում սանիկներից պատրաստել ազնիւ, օգտակար մարդիկ։ Այդպիսի սրտաբուղխ սէրը թոյլ է տալիս որոշ չափով «խստութիւն»։ Անկեղծ կերպով սիրելով աշակերտներին՝ ուսուցիչը իրաւունք կունենայ որոշ խրատութիւն գործ դնել երբ աշակերտը շեղվում է ուղիղ ճանապարհից։ Եւ վերջապէս անկեղծ, ճշմարիտ սէրն է, որ տալով գործին մեծ յաջողութիւն, տալիս է ուսուցչին մեծ համբերութիւն, որ այնքան հարկաւոր է ուսուցչին։ Սիրելով աշակերտներին, ուսուցիչը իր պահանջները չափաւորում է աշակերտների ոյժերովը և նրանց հանգամանքներովը, և հետևանքին մեծ համբերութեամբ է սպասում։ Սիրոյ և համբերութեան հետ միասին ուսուցիչը պիտի ունենայ և հաստատակամութիւն. սիրելով, համբերելով, հաստատակամ լինելով ուսուցիչը նըպատակի իրագործման մէջ չէ կարող լինել թոյլ, անվճռողական։

Բացի դրանցից ուսուցիչը իր անձնական յատկութիւնների մէջ պիտի ունենայ ոյժ իրան զսպելու, իրան զսպելու։ Այդ յատկութիւնը մեծ ներգործութիւն ունի աշակերտների վրա։ Այդպիսի յատկութիւնից զուրկ լինելն է, որից

գործեր կարդաղրել։—Իսկ մեր պաշտօնական մարմինները, կամ ինչպէս կըսեն, մեր գործիչները, անոնք ինչ համոզումի համեմատ կը շակեն իրենց գործերը։ Մեր պաշտօնական մարմինները կերեւի յարած են վերջին համոզման։ Անոնք մոքերնին դրած են թէ՝ Անգղիա միշտ նենգաւոր Ալպիոնն է, la perfide Albion, հետևաբար անոր վստահելու չէ։—Այս միջոցիս անզլուխ մնալնիս շատ ցաւալի է։ Պատրիարքը տատանեալ վիճակի մէջ կերեւի, և չը գիտէր ինչ ընելիքը։ Ինչ որ կը տեսնուի, ինչ նշաններ արդ յայտնի կըլլան, անոնցմէ կրնանք մակաբերել թէ Պատրիարքը հաւատարիմ իր խոստման տարի մը դէթ ոչինչ պիտի խօսի ընդդէմ թիւրքերուն։ Իսկ Պօլսոյ ժողովուրդի մէջ Ներսէս Պատրիարքի նկատմամբ առջի սէրն ու հաւատքը չը կայ։ Այս բանիս համոզվելու համար բաւական է տեսակցել զանազան դասերու պատկանող անձերու հետ։ Ամենքն ալ մէկ խօսք կըսեն «Պատրիարքը այլ ևս Դրան մարդը կը սեպուի»։

Բայց Ներսէս պատրիարք կրնայ այսօր բացարձակապէս թրքասէր ըլլալ։ Շատ տարօրինակ պիտի ըլլար եթէ ասանկ բան մը պատահէր։ Ինը տարի է մօտ որ Ներսէս սրբազան պատրիարքնիս է. այս ինը տարուան մէջ ոչինչ ըրինք այն ճիւղին մէջ զոր ներքին գործ կանուանենք, ընդհակառակն աւելի յետադիմեցինք, ամեն ինչ երեսի վրա թողուցինք։ Սակայն աս ասանկ ըլլալով տիեզերքիս բոլոր հայերը պաշտեցին Ներսէս պատրիարքը։ Պատճառը պարզ է. այդ ներքին գործերը այսպէս պիտի ըլլային, ուրիշ կերպ չէին կրնար ըլլալ։ Իսկ Ներսէս պատրիարք աւելի ընդարձակ սահմանի մէջ փնտռեց Թիւրքիոյ հայոց վերակենդանութիւնը, Հայաստանի հիմնական բարեկարգութեանց մէջ։ Հարկ էր որ բոլոր գլխաւոր ուշադրութիւնը այս կէտիս նուիրէր և նուիրեց։ Այս պարագային մէջ ալ պատրիարքը ճիշտ հասարակութեան համոզումը ներկայացուց։ Թիւրք կառավարութիւնը հետամուտ հայ ազգը տկարացնելու և ջնջելու, հայ ազգն ուրիշ բան չէր կրնար ընել բայց եթէ իր փրկութիւնը մտածել։ Ազգ ու պատրիարք ըմբռնեցին թէ արտաքին ազդեցութիւնը միայն կըրնայ այս փրկութեան յոյսը մեզ տալ։ Որիշ ատեն հարկ կըլլայ քանի մը խօսք ընել պատրիարքի անցեալին վրայ։

Մենք ամենքս ալ մինչև հիմա Ներսէս պատրիարք ճանչցանք խմաստուն, խոհական, անշահախնդիր և կատարեալ եկեղեցական մը, ուստի ինչպէս ենթադրենք թէ խաբուած ենք։ Այս համոզումներով մեր հաւատքը չենք պակսեցներ Ներսէս պատրիարքի վրայէն։ Մենք կը կարծենք թէ ժողովուրդը փոխանակ խուլ հակառակութիւն մը, կամ պաղութիւն մը ցոյց տալու իր պատրիարքին, պէտք է անոր բոլորը ժողովի, անոր աջակից ըլլայ և զօրավիգ։ Այս միջոցիս չէ որ երկպառակութիւններ ընելով, մէջերնիս բաժնուելով և աւելի կամ նուազ հիմնաւոր կասկածանքներէ առաջնորդուելով պիտի կրնանք մեր վիճակը բարւոքել։

Բայց եթէ մեր բոլոր համոզմանց հակառակ Ներսէս պատրիարք յայտարարէ, զոր չենք կարծեր բնաւ, թէ՝ ինքն սխալած է մինչև հիմայ, այն ատենն է միայն որ զանիկայ իր տեղը ճամբելու է ըսելով որ «ալ չնորհակալ ենք այնպիսի պատրիարքէ մը որ օր մը թրքասէր կըլլայ, միւս օրը թրքատեաց, վերջը դարձեալ թրքասէր, անկէ ետք ալ չենք գիտեր ինչ պիտի ըլլայ։»—Սակայն մենք հաւատ ունենք որ երբէք այս տխուր հարկին մէջ չը պիտի գտնուինք։ Ներսէս պատրիարք ազգէն չը կրնար բաժնուիլ։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՄՕՍԿՎԱ, 14 մայիսի։ Երէկ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ նայեց արտաքին գործերի մինիստրութեան արխիվը։ Այսօր կատարվեցաւ պետական նշանների տեղափոխութիւնը զէնքերի պալատից Գահական դահլիճը։ Այսօր երեկոյեան ժամին բոլոր եկեղեցիները լի էին աղօթողներով։ Էգուց երեկոյեան ժամի 3-ից Թագադրական մատնիցի ամենախեղճ վիճակի մէջ են։ Այժմեան մեր կրթութիւնը միանգամայն սպանում է սանիկի մէջ եռանդ, և ցանկութիւն առաջ գնալու։ Շատերը նկատած կը լինեն որ ուսմնարանների պատերից դուրս դալով, հայ աշակերտը, աշակերտուհին ինչպէս կանգ են առնում, և յառաջադիմութիւնը այլ ևս պահանջ չէ լինում։ Այս արդէն մեր կրթութեան այժմեան վիճակի ցաւալի հետևանքն է, որի վրա, մի քանի տարի առաջ «Մշակը» հարևանցի կերպով ակնարկեց։ Արժէ որ մեր մասնագիտական-մանկավարժական ամսագիրները դորանով զբաղվեն։

Խ. Մ.

ՅԱՅՏՆԻ ԵՂԱԾ ԹՈՒՅԼ ԵՎ ՏԱԼԻՍ ԲԱՐԿԱՆԱԼ, ԾԻԾԵԼ, ՀԱՅՀՈՅԼԼ, ԵՐԲ ՏԵՍՆՈՒՄ ԵՍ ՉԵՂՈՒՄՆ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ։

Ուսուցչի վեհանձնութիւնը, խաղաղ և հանդարտ գործունէութիւնը աւելի է ազդում աշակերտների վրա, քան թէ աղաղակելը, ոտները գետնին խրփելը, խրոխտալը և այլն։ Ուսուցչի այդպիսի թուլութիւնից աշակերտները կարող են օգուտ քաղել, և զրանից յետոյ ուսուցչի հեղինակութիւնը կարող է խախտվել։ Ամենորդ է խօսելը ուսուցչի արթուն հսկողութեան վրա։

Ի վերջոյ, անհրաժեշտ է որ ուսուցիչը բարեխղճութեամբ վերաբերվի դէպի իր գործը, դէպի իր պարտականութիւնը։ Նորա այդ բարեխղճութիւնը կայանում է այն բանի մէջ, թէ ինչպէս է վերաբերվում ուսուցիչը դէպի աշակերտների աշխատանքները, և թէ ինչպիսի պատրաստութեամբ է նա գալիս դասի։ Ուսուցչից պահանջվում է որ նա ամեն կողմից մշակի իր դասը, մտածէ այն բանի մասին թէ ինչպէս պէտք է աւանդել, որ նորը կապվի հին մտաւոր շրջանների հետ։ Ուսուցիչը պարտական է հոգալ և դասի կենդանութեան վրա։ Այդ ուսուցչի անհոգութիւնն է որ ստիպում է աշակերտներին ճանձրանութեամբ պարապել։ Այդ ուսուցչին է՝ որ աշակերտները փոխանակ դասին հետևելու, միանգամայն այլ բաներով են զբաղվում, կամ թէ չէ, մինչև անգամ քնում են։ Շատ լաւ կը լինի, եթէ ուսուցիչը իր դասի համար պատրաստէ ծրագիր (конспектъ)։ Դործի յաջողութեան համար մեծ նշանակութիւն ունի և ուսուցչի ճշդութիւնը, և կանոնաւորապէս զբաղուած լինելը։ Այդ ճշդութիւնից է կախված ուսուցչի դասերին կանոնաւոր կերպով յաճախելը։ Անկանոնութիւնը ազդում է ոչ միայն դասընթացի վրա, այլ և աշակերտների եռանդի վրա։ Այդ նոյն ճշդութիւնը, որ պիտի լինի ուսուցչի ընտանեկան կեանքի մէջ ևս, մեծ արժէք ունի նորա առողջութեան դիտմամբ, իսկ առողջութիւնից կախված է շատ բան։

Ուսուցիչը պիտի կարողանայ վարվել աշակերտների հետ։ Նա պիտի աշխատէ չը վախեցնել երեխաներին, այլ և չը զցել իր հեղինակութիւնը։ Վարվողութեան չնորհիւ միայն ուսուցիչը կարող է կապել իր հետ աշակերտներին, և ծանօթանալ նոցա անձնաւորութիւնների հետ։ Իսկ յայտնի է թէ զոքա որքան մեծ պայմաններ են մանկավարժական ասպարէզի վրա, ուսուցչական գործունէութեան մէջ։

Ոչ պակաս նշանակութիւն ունի ուսուցչի յարաբերութիւնը դէպի աշակերտների ծնողքը, կամ խնամատարները։ Շատերին յայտնի կը լինի թէ որքան մեծ նշանակութիւն ունի ընտանիքը կրթութիւն գործի մէջ։ Հիմնվելով այս բանի վրա լոկ, որ աշակերտների կրթութեան մէջ, ուսուցիչը և ծնողք նոյն նպատակը ունեն, պէտք է որ երկու կողմերի մէջ լինի լաւ յարաբերութիւն, բարեկամութիւն։ Եթէ ուսուցիչը նուիրված է իր գործին, նա պէտք է միշտ յարաբերութեան մէջ լինի ծնողաց հետ, որովհետև իր գործի յաջողութեան դեկի մի կողմն էլ ծնողաց ձեռքին է։ Ուսուցիչը պէտք է պարզէ ծնողներին կարևորը, պէտք է տայ հարկաւոր հրահանգները։ Իսկ այս տուած հրահանգները պէտք է ծնողաց աչքում նշանակութիւն ունենան։ Այդ նշանակութիւնը կախված է այն բանից թէ ինչպէս են նայում ծնողք ուսուցչի վրա։ Նորա համար ուսուցիչը պիտի լինի անձնուէր, լաւ յատկութիւնների տէր։ Ուսուցչի վատ յարաբերութիւնը դէպի ծնողքը, լաւ հետևանք չէ կարող ունենալ։ Եւ ոչ մի ուսուցիչ բարոյապէս իրաւունք չունի արհամարհանքով վերաբերվելու դէպի ծնողքը, եթէ ինքը շատ և շատ բարձր լինի նոցանից մտաւորապէս և այլ կողմերով։ Ընտանիքը և ուսումնարանը պէտք է կապվեն։ Ուսուցիչը իր ազդեցութիւնը պէտք է տարածէ ուսումնարանի պատերից հեռու, հեռու հասարակութեան վրա։

Սակայն այդ բոլորին լիութիւն տալու համար, և ընդհանրապէս մի պաշտօն ստանձնելու համար, այն էլ ուսուցչական մեծ պաշտօնը.—պէտք է ունենալ որոշեալ չափով նախապատրաստութիւն, ինչպէս և վերևը ասուեցաւ։ Այդ նախապատրաստութիւնը հարկաւոր է. բայց երբէք ուսուցիչը չը պիտի կանգնէ այն աստիճանի վրա, որի վրա նա էր իր գործունէութեան սկզբին։ Նա պէտք է միշտ կատարելագործվի։ Ինքնակրթութիւնը միշտ պիտի շարունակվի. ինքնամշակութիւնը կանգ չը պէտք է առնէ *)։ Պիտի լինի կատարելագործութիւն։

Կատարելագործվելը ուսուցչին անհրաժեշտ է։ Նախ՝ այն բանի համար, որ նա միջոց ունենայ լաւ ազդեցութիւն անելու աշակերտների վրա։ Ով որ ինքը մի տեղ կանգնած է, նա չէ կարող ուրիշներին առաջ մղել. ով ինքը կատարելագործվելու կամք չէ ցոյց տալիս, նա ուրիշների մէջ մի այդպիսի ցանկութիւն չէ կարող առաջ բերել։ Այն ուսուցիչը, որի մէջ մնռած է առաջ գնալու ձգտումը, սպանող ներգործութիւն կունենայ աշակերտների վրա։

Երկրորդ՝ այն բանի համար, որ ուսուցիչը յետ չը մնայ ուսումնական գործի առաջ գնալուցը, և նորա մեթոդական մշակութիւնից։ Ուսուցման առարկան և նրա մեթոդիկան միշտ մշակվում են։ Այն ուսուցիչը որ չէ հետևում այս բոլորին—նա յետ կը մնայ։ Կատարելագործութեան վրա չը մտածելով ուսուցիչը կորցնում է եղածի մի մասը։ Այսպիսով նորա մտաւոր ոյժերը պակասում են, մինչդեռ աւելանալու կարիք կար։ «Ով առաջ չէ գնում, նա յետ է գնում»—ասած է։

Վերջապէս այդ կատարելագործութիւնը հարկաւոր է այն բանի համար, որ զորանով միայն կարող է աւելանալ ուսուցչի եռանդը, ոյժը, սէրը դէպի իր առարկան. հակառակ դէպքում գործը կը կորցնէ իր գրաւիչ զօրութիւնը, կը հնանայ։ Ազատ ժամերը անօգուտ անցկացնելով՝ ուսուցիչը իր գործը կարող է սպանել։

Այդ կատարելագործութեան ուղղութիւնը պայմանաւորվում է ուսուցչի գործունէութեան եղանակով։ Այն բոլորը, ինչ որ կարող է լաւ կերպով ազդել ուսման և դաստիարակութեան գործի վրա, պիտի հետաքրքրէ ուսուցչին, պիտի գրաւէ նորան, պիտի նիթ դառնայ նորա զբաղմունքների և ուսումնասիրութեան համար։

Ուսուցչի համար ինքնամշակութեան, կատարելագործութեան միջոցները մի քանի են։ Կը մի չենք գլխաւորները։ ա) Նպատակայարմար գրքերի ընթերցանութիւնը և ուսումնասիրութիւնը։ բ) Մանկական բնաւորութեան ուսումնասիրութիւնը և նրանց ուսուցանելը, և վերջապէս գ) Մանկավարժական զրոյցները։

Աւելորդ չի լինի այս գլխաւոր միջոցների մասին մի փոքր երկար խօսել։

Նպատակայարմար գրքերի ընթերցանութիւնը սովորական միջոցն է կատարելագործութեան համար։ Ընթերցանութեամբ ուսուցիչը կարողանում է արթնացնել իր բոլոր մտաւոր ոյժերը, կամ թէ ծանօթանում է միանգամայն նոր տեղեկութիւնների և տեսութիւնների հետ, կամ թէ կարողանում է ունեցածի մէջ նորանոր կապակցութիւններ անել։ Այսպէս զգվածքները պիտի կապ ունենան ուսուցչի առարկայի հետ։ Այդ սահմանի գրքերը պիտի լինեն հիմք։ Այդ ծանօթութիւնները և տեղեկութիւնները քիչ քիչ պիտի ընդլայնանան, և պիտի տարածվեն սեփական առարկային կապ ունեցողների վրա։ Ընթերցանութիւն միջոցով ուսուցիչը իրան պէտք է պարզէ մինչև անդամ երկրորդական խնդիրները։ Ուսուցչի ուսումնասիրութեան նիթ պիտի լինի այն բոլորը, որ կարող է լաւացնել ընդհանրապէս իր գործունէութիւնը։ Դորա համար հարկաւոր է ծանօթանալ մանկավարժութեան պատմութեան հետ, մարտաւոր-բարոյական-ֆիզիքական զարգացման օրէնքների հետ, և վերջապէս այդ բոլորին հիմք եղող գիտութիւնների հետ՝ հոգեբանութեան, առողջապահութեան, լոգիկայի հետ։ Ուսուցիչը բացի դորանից պէտք է մշակէ իր մոքերը և զգացմունքները։ Դորա համար կարևոր են բանաստեղծական գիտութիւնները, պատմական գրուածքները։ Աւելորդ է խօսել՝ հարկէ թէ ինչ պայմանների է ենթարկվում ընթերցանութիւնը, և որոնք են այն միջոցները, որոնցով կարելի է ընթերցանութիւնը աւելի օգտակար կացուցանել, յիշողութեան մէջ աւելի արմատացնել կարողացածը *)։

*) Այստեղ ի հարկէ առաջ է գալիս, թէ որ դեռք միջոցներ կան այդ բոլորը ձեռք բերելու։

*) Այդ մի մեծ խնդիր է, որի վրա հարկաւոր կը լինի երկար խօսել։ Մեր ուսումնարանները այս կողմից ամենախեղճ վիճակի մէջ են։ Այժմեան մեր կրթութիւնը միանգամայն սպանում է սանիկի մէջ եռանդ, և ցանկութիւն առաջ գնալու։ Շատերը նկատած կը լինեն որ ուսումնարանների պատերից դուրս դալով, հայ աշակերտը, աշակերտուհին ինչպէս կանգ են առնում, և յառաջադիմութիւնը այլ ևս պահանջ չէ լինում։ Այս արդէն մեր կրթութեան այժմեան վիճակի ցաւալի հետևանքն է, որի վրա, մի քանի տարի առաջ «Մշակը» հարևանցի կերպով ակնարկեց։ Արժէ որ մեր մասնագիտական-մանկավարժական ամսագիրները դորանով զբաղվեն։

սանքը, զօրքերը ուղևորվում են դէպի Խաչկիևվկի հրապարակը, որտեղ հանդիսաւոր մաղթանքից յետոյ եկեղեցական զօրախաղը կատարվի: Բոլոր լրագիրների մէջ ժողովրդական տօնին նուիրված զեղեցիկ յօդուածներ են տպված: Ընդհանուր միտքն այն է, որ ոչ մի տեսակ յանցաւոր փորձեր չեն կարող թուլացնել այն կապերը, որոնք միացնում են թագաւորին ժողովուրդի հետ, որոնք ամրացրած են թագադրութեամբ և օծումով թագաւորելու համար: Թագաւորի միութեամբ ժողովրդի հետ պայմանաւորված է ինչպէս Ռուսաստանի ներքին ոյժը նոյնպէս և օտար երկիրների յարգանքը դէպի նա: Ընդհանուր աղօթքն այն է, որ Ամենաբարձրեալը օգնէ թագաւորին կատարել իր ուխտը՝ Իրան ամբողջապէս նուիրել սիրելի հայրենիքի փառքին և բարօրութեանը, ծառայել ճշմարտութեանը և հոգալ ժողովրդի բարօրութեան համար: Ներկայումս առաջին անգամ ժողովուրդը տօնում է մայրենի երկրի փառաւոր տօնը իբրև լիակատար իրաւունք ունեցող և ազատ քաղաքացի, այդ ազատութեամբ արդարացնելով իր ամուր հաւատը դէպի թագաւորը, նրանից սիրոյ և հաւատարմութեան նոր ոյժեր քաղելով դէպի ինքնակալ թագաւորը: Շատ լրագիրների մէջ ոտանաւորներ են տպված, „Новое Время“ լրագրի մէջ ֆեռի ոտանաւորը:

ՄՕՍԿՎԱ, 15 մայիսի: Նոցա կայսերական Մեծութիւնների թագադրութեան սրբազան ծէսը կատարվեցաւ Թնդանօթների որոտման, զանգահարութեան և բազմաթիւ ժողովրդի անդադար աղաղակների ժամանակ, որ շրջապատել էր Կրեմլը Մօսկվա գետի և հակառակ գետեզրի կողմից: Հանդիսի սկիզբը աւետեցին թնդանօթաձգութեամբ Նիկոլայեվսկի պալատի հրապարակից: 9 ժամին և 35 րոպէին գնացքը ըսկսվեցաւ: Դեսպանները առաջուց բռնեցին իրանց տեղերը Ուսպենսկի մայր-եկեղեցու մէջ: Օտար արքայազն իշխանները ուղեկցում էին թագաժառանգին, որ Նոցա Մեծութիւններից առաջ մտաւ մայր-եկեղեցին: Ճանապարհը օրհնված ջրով սրսկում էր աւագ քահանայ Բաժանով: Բարձր հոգևորականութիւնը շքեղ զգեստաւորված մանաւանդ միտրօպոլիտը դուրս եկաւ մայր-եկեղեցուց Կայսերական նշանների մօտենալու րոպէին, որոնց բերում էին ոսկէ բարձերի վրա: Նոցա Մեծութիւնների առաջ գնում էր փայլուն կօրտէժ: Թագաւորի առաջ զբնում էր գլխաւոր մարշալ գեներալ-ադիւտանտ իշխան Դոլգօրուկով, որ կրում էր կրծքի վրա այսօր նրան շնորհված բրիլիանտներով զարդարված Նորին Մեծութեան պատկերը: Կարմիր դրան ներքին աստիճանի մօտ Նոցա Մեծութիւնները մտան շքեղ ամպհովանիի տակ, որ տանում էին գեներալ-ադիւտանտներ: Թագաւորը տանում էր Կայսրուհուն ձեռքից բռնած: Թագաւորը գլխաբաց էր, գլխարկը ձեռքին, թագուհին զարմանալի շքեղ հագուստով ռուսաց ձեւի: Մայր-եկեղեցու դրան մօտ Իսանիկի միտրօպոլիտը կարճառօտ ճառ արտասանեց, Նովգորոդի միտրոպոլիտ Խրիդոր Նոցա Մեծութիւններին մատոյց խաչ համբուրելու համար: Կիեվի միտրոպոլիտ Պլատոն Նոցա Մեծութիւններին սրսկեց օրհնված ջրով: Բոլորն շատ հանդիսաւոր էր: Թագաւորը արտասվեց: Նոցա Մեծութիւններին շրջապատող Մեծ Իշխանները լալիս էին: Ներկայ եղողները շատ յուզված էին: Ամենքը գիտէին, թէ ինչպիսի մեծ անցքի վկաներ և մասնակցողներ էին: Ժողովուրդի աղաղակները ծածկում էր զանգահարութիւնը: Մայր-եկեղեցու ներքին մասը փայլում էր կրակներով, անձրևը, որ գալիս էր մինչև այդ ժամանակ, դադարեց և արևը միլիոնաւոր կայծեր թափեց դարևոր պատկերների երեսներին: Նոցա Մեծութիւնները ծունկ խոնարհեցրին սուրբ դռների մօտ, համբուրեցին սուրբ պատկերները և բազմեցին Միխայիլ և Ալէքսի Բոմանովների գահի վրա: Ժամասացութիւնը սկսվեցաւ փառաւոր լուութեան ժամանակ: Ճառը կարդաց Պլատոն Կիեվսկի, „Մեծ Աստուած“ աղօթքը Նովգորոդի միտրոպոլիտ Խրիդոր: „Տէր Աստուած մեր, թագաւորների թագաւոր“ աղօթքի ժամանակ թագաւորը արտասվեց: Դժուար է արտայայտել, թէ ինչ էին զգում հզօր թագակրի բարեպաշտութեան և արտասուքների վկաները: Ուղղափառ ժամասացութեան սրբազան գեղեցկութիւնը մեծ տպաւորութիւն էր գործում օտարների վրա: Թագաւորի անձամբ իր գլխի վրա թագ դնելու, մեռօնով օծվելու և Ուսպենսկի մայր-եկեղեցուց դուրս գալու րոպէները ժողովուրդին աւետում էին թնդանօթաձգութեամբ և զանգահարութեամբ. Ուսպենսկի մայր-եկեղեցուց Նոցա Մեծութիւնները անցան Արխանգելսկի ու Բլագովեշչենսկի մայր-եկեղեցիները: Նոցա Մեծութիւնների երևալը ամէն անգամ ողջունվում էր ոգևորված ուրայով: Կարմիր դրան մօտ հասնելով, Նոցա Մեծութիւնները գլուխ տուին ժողովուրդին: Գետինը շարժվեց աղաղակներից: Նոցա Մեծութիւնները անցան Գրանովիտայա դահլիճը: Հանդիսին մասնակցող զօրքերը երաժիշտներով և դրօշակներով հանդիսաւոր գնացքով պրոտեցին պալատի շուրջը: Կենացները հանդիսաւոր ճաշի ժամանակ Գրանովիտայա դահլիճի մէջ յայտնվում էին թնդանօթաձգութեամբ: Փողոցների վրա ծախում են բարձրագոյն մանիֆեստի օրինակները: Եղուց մանիֆեստը կը բաժանվի ժողովուրդին եկեղեցիների և պօլիցիական բաժինների մէջ: Այսօր հրատարակվեցան „Сенатскія Вѣдомости“ լրագրի երեք համարները: Բովանդակութիւնն է՝ մանիֆեստ, թագաւորագիր, պարգևներ և շնորհումներ թագադրութեան առիթով: Երկինքը մաքրվեցաւ ամպերից և լուսաւորութիւնը խոստանում փայլուն լինել:

ՄՕՍԿՎԱ, 16 մայիսի: Բարձրագոյն մանիֆեստը շնորհում է մի շարք՝ ներումների գանազան հատուցումների վերացնելը պետական, ուղղելի, պալատական Նորին Մեծութեան զրասենեակի կալուածքների պահողներից, ամէն տեսակ ներումներ մասնաւոր անձանց, հասարակութիւններին, դասակարգերին պարտքեր վերադարձնելու, ծառայութեան վերաբերեալ չը վերցրած հատուցումները, վնասները, կորուստները և սխալները ներելու վերաբերութեամբ: Տուգանքների ներումն դրօշմահարկի կանոնագրութեան դէմ գործելու մասին, ողորմութիւններ և արտօնութիւններ յանցաւորներին բացի վարձատրութեան վճարելը վնասների համար այն բոլոր յանցանքների պատժի ժամանակը, որոնք ներման չեն ենթարկվում, պակասեցնվում է մի երրորդ-

---

Երեխաների ընտաւորութիւնը ուսումնասիրելը ևս միջոց է կատարելագործուելու և պարզելու ուսուցման յառաջդիմութեան եղանակները: Այդ միջոցով միայն ուսուցիչը կարող է ծանօթանալ շատ հոգեբանական երևոյթների հետ, այդ միջոցով միայն ուսուցիչը կարող կը լինի ծանօթանալ երեխայի անհատականութեան հետ, և սոքա այնպիսի պայմաններ են, որ շատ մեծ կշիռ ունեն մանկավարժութեան մէջ: Պարզ է որ այդ բոլորը անելու համար կրկին ուսուցչից պահանջվում է նախապատրաստութիւն: Առանձին ուշադրութեամբ քննելով իր դասաւանդութիւնը, ուսուցիչը կարող է մեծ մշակութիւն գործել իր անձի վրա: Այդպիսի լաւ քննութիւններով միայն ուսուցիչը կարող կը լինի փոքր առ փոքր լաւացնել իր դասաւանդութեան եղանակները: Այսպիսի ուսուցիչները միայն կարող են ասել՝ թէ իրանք փորձված են: Սոքա այնպիսի մեծ խնդիրներ են, և այնքան պարզ մանկավարժութեան մէջ, որ դոցա վրա երկար խօսելը այստեղ՝ համարեա անյարմար է: Նորագոյն մանկավարժութեան գլխաւոր հիմքերից են դոքա:

Վերջապէս ուսուցչի այդ կատարելագործութեանը կարող են նպաստել մանկավարժական զրոյցները՝ կամ պաշտօնական ուսուցիչների հետ, կամ գործին ծանօթ անձանց հետ: Այդ օրինակ զրոյցները կարող են այնպիսի հարցեր պարզել, որ երբէք մարդ ինքն իրան չէր կարող պարզել: Այստեղ կարծիքների, մտքերի և գիտութիւնների շփումն է յառաջ գալիս:

Այդ կէտից ահա մեծ նշանակութիւն ունեն մանկավարժական ժողովները, կամ ուսուցչական ժողովները: Այդ ուսուցչական ժողովները կարող են զանազան դիրքով լինել: Այդպիսի ժողովները փոքրիկ դիրքով, արձակ ժամանակները աւելի կարևոր են մեր հայերիս մէջ, որտեղ գիւղական ուսուցիչները ոչինչ յարաբերութիւններ չունեն և ոչինչ միջոցներ կատարելագործվելու, առաջ գնալու, տեղեկանալու չորս կողմը կատարվող փոփոխութիւնների հետ: Իսկ մանկավարժական ժողովները առանձին հիմնարկութիւնների մէջ, որոշ դիրքով և ծրագրով, այն մեծ օգուտը ունեն, որ կը հաստատեն միութիւն և սերտ կապ ուսուցիչների մէջ, որոնք շատ անդամ տեղեկութիւն չունեն, և չեն կամենում ունենալ միմեանց արածի և անելիքի վրա: Այդպէս է մեր մէջ և դորա վատ հետևանքները հասկանալի է *):

Խօսելով կատարելագործութեան վրա, պէտք է նկատել՝ որ այդ պայմանի համար հարկաւոր է որ նախ ինքը ուսուցիչը ունենայ բուռն ցանկութիւն, և յետոյ լինեն միջոցներ: Ուսուցչի ցանկութիւնը կախված է այն բանից թէ ինչպէս է նա վերաբերվում դէպի իր գործը, և ինչ տեսակ կրթութեան ազդեցութեան տակ է եղել: Վատ կրթութիւնը կարող է ինքնամշակութեան բոլոր ոյժը սպառել, ինչպէս վերև ասացինք ծանօթութեան մէջ: Ի վերջոյ պէտք է մտածել միջոցների մասին ևս, որ կրկին գլխաւոր պայմաններից է: Այդ հարցը շօշափում է արդէն և գրադարանների գործը. բայց այդ թողնենք: Կարծում ենք որ այդ արդէն պարզ կը լինի: Մտաւոր այս կատարելագործութեան հետ կապված է և բարոյական կատարելագործութիւնը: Այս արդէն ամենայն մարդու պարտքն է, և աւելի ուսուցչի պարտքը: Ուսուցիչը միշտ իր արարքները պիտի քննէ: Նա միշտ իր առաջ պիտի ունենայ մի կատարելատիպ, մի իդէալ, որին անդադար ձգտելու ցանկութիւն պիտի ունենայ: Այդպիսի իդէալը մանկավարժութեան մէջ որոշած է: Մարդկութեան Փրկիչը ինքը տուել է այդ իդէալը: Այդ մտաւոր-բարոյական ձգտման մէջն է ուսուցչի բոլոր ոյժը, նրա գործի բոլոր յաջողութիւնը և նպատակին շուտ հասնելը:

Մի քանի խօսք ևս, a propos, և վերջացնենք:

Վաղուց արդէն և մեր մէջ խոստովանում են ուսուցչի մեծ պակասութիւնները, խոստովանում են նրա պաշտօնի ծանրութիւնը: Սակայն բոլորիքեանք ցաւելով գիտենք թէ ինչ ողորմելի դրութեան մէջ են մեր ուսուցիչների մեծ մասը, իրանց մտաւոր-բարոյական ոյժերով: Նոյն իսկ մտաւոր կողմից յաջողակները, դեռ բարոյական փոքրիկ ոյժեր ևս չունեն: Վերևի խօսքերից պարզ երևում է թէ որքան մեծ պիտի լինի ուսուցչի նախապատրաստութիւնը: Մեր ուսուցիչներ պատրաստող ուսումնարանները ևս իրանց նպատակին չեն հասնում: Չեն հասնում՝ որովհետև ուժով չեն ձգտում: Վերջապէս որոշակի կերպով պէտք է պարզել թէ ինչպէս պէտք է տանել գործը, լաւ ուսուցիչներ ունենալու համար, մինչդեռ դոցա ձեռքին պիտի լինի մատաղ սերնդի կրթութիւնը: Ժամանակ է պարզելու այն մեծ խնդիրները, որոնք կապված են այդ գործի հետ: Ժամանակ է հոգալու և նրա մասին, թէ ինչպէս պէտք է առաջնորդվեն այն ուսուցիչները, որոնք ոյժ չունեն անձամբ առաջ գնալու: Եւ այս բանի մէջ, միթէ գլխաւոր գործը մասնագէտ-մանկավարժների և մասնագիտական-հրատարակութիւնների վրա չէ ընկնում: Քաղաքական.դրականական թերթերը առանց այն էլ շատ բան ունեն կատարելու: Զարմանալի բան է: Մեր մէջ ամենքը պահանջում են ուսուցչից, և ոչ ոք ուսուցչին չէ ուզում տալ հարկաւորը: Ամենքը տեսնում են նորա վիճակը: Ինչու՞ ուրեմն մեր մանկավարժական հանդէսները չեն ուզում ուղեցոյց և լապտեր լինել: Ի՞նչ անէ խեղճ հայ ուսուցիչը, եթէ մինչև անգամ նա ունենայ բուռն ցանկութիւններ: Նա չէ ստացել կարևոր գիտելիքներ, միջոց էլ չունի ստանալու: Ինչու՞ չեն պարզում այնպիսի հարցեր, որոնք մթութեան մէջ կարող են պահել հայ-վարժապետին: Պէտք է անձամբ տեղականալ, իմանալու համար բոլոր էութիւնը: Ամենքն իրանց մասնագիտական ուղղութիւնն են գովում, և հայ վարժապետը դեռ ոյժ էլ չունի ընտրութիւններ անելու իր գործածելի դասագրքերի մէջ: Եւ ոչ ոք նրան չէ պարզում այդ... Այսօր մեր գիւղերի մէջ չկնվում են ուսումնարաններ և ոչ մէկը չը տուեց միջոց, չը ցոյց տուեց եղանակը, կերպը, ձևերը ուսումնարանական առողջապահական շինութիւնների: Շինում են այնպէս, ինչպէս իրանց խելքն է կտրում: Եւ վաղը պիտի գոչեն՝ թէ մեր ուսումնարանները ֆիզիկապէս աշակերտներին սպանում են: Փառք Աստուծոյ, ունենք մանկավարժական հանդէսներ, ունենք մանկավարժներ, ունենք առողջապահներ.—թող տան միջոցներ հայ ուսուցչին, որպէս զի նա իր թոյլ ոյժերով, բայց անկեղծ ցանկութիւններով առաջ գնալ կարողանայ. թող տան միջոցներ՝ գործը լաւ տանելու, և ապա պահանջեն: Ցոյց տուեցէք եղանակը, և այն ժամանակ հայ ուսուցիչները ձեզ կը տան վիճակագրական տեղեկութիւններ, ձեզ կը տան և բաւականին լաւ եղանակներ դաստիարակութեան: Տուեցէք և ապա պահանջեցէք: Խնդիրը հիմնովին քննեցէք. չարը արմատից կտրեցէք, լիութիւն տուէք այսքան պահանջների դէմ մի փոքրիկ մասին, և այն ժամանակ կը տեսնէք լաւ նշաններ, և այն ժամանակ միայն ձեր մանկավարժական հանդէսները յաջողութիւն կունենան:

Մենք կրկին անդամ ուզեցինք ցոյց տալ ուսուցչի մեծ պարտականութիւնները, նրա պաշտօնի մեծութիւնը. կրկին անդամ ուզեցինք խնդիրը առաջ բերել, և յոյս ունենք, որ դոքա, մեծ. խրմբագրատեր, տպագրելով այս փոքրիկ յօդուածը, մեզ միջոց կը տաք բուն նպատակին դիմելու.—այն է ուշադրութիւն հրաւիրելու հայ ուսուցչի դրութեան վրա, և սրա համար կը խնդրենք որ միացնէք ձեր ձայնը և հայեացքները, աւելի ոյժ տալու համար այս կենսական խնդրին:

Թիֆլիս. Խ. Մալումեանց

---

*) Ինչ ոյժ և կապ լինի մի ուսումնարանի ուսման մէջ, երբ մի ուսուցիչ միւսի արածի վրա տեղեկութիւն չունի. երբ մի լեզուի ուսուցիչը չը գիտէ ինչ է անում միւս լեզուի ուսուցիչը. երբ ազգային պատմութեան ուսուցիչը չը գիտէ թէ ինչ է անում ընդհանուր պատմութեան ուսուցիչը, և հակառակը: Եւ ինչ սերտ կապ կարող է լինել դրանից յետոյ ուսուցչական խմբի մէջ: Զարմանալի չէ դրանից յետոյ, որ գտնվում են այնպիսի ուսուցիչներ, որոնք ամիսներով ուսումնարանի մէջ գործելով՝ չեն խղճահարվում հարցնելու՝ այն ուսումնարանի մէջ գերմաներէն սովորցնելուն, կամ այս ուսումնարանի մէջ պատմութիւն, ֆիզիկա, մանկավարժութիւն սովորեցնում են»:

Ս. Մ.

Այդ կողմից հայ ուսուցիչների դրութիւնը յայտնի է: Մեր գրականութիւնը աղքատ է այդպիսի գրուածքներով: Այդպիսի գրքեր մեզ մօտ չեն թարգմանվում: Հայ ուսուցչի նիւթականը ևս լաւ չէ, այդ բոլորը ձեռք բերելու համար: Մեզ մօտ ոչինչ միջոց չը կայ մտածելու կատարելագործութեան վրա. մանաւանդ որ ցանկութիւնն էլ փոքր է: Մասնագիտական հրատարակութիւնները այդ կողմից նիւթ չեն տալիս, և ոչ էլ ճանապարհ են ցոյց տալիս: Չէ որ մեր ուսուցիչների մեծ մասը կարօտ է առաջնորդի: Ուսումնարանը քիչ է տալիս: Գործելու ժամանակ միջոցներ չը կան: Ի՞նչ կը լինի այդ բոլորի հետևանքը, հեշտ է պարզել:

Խ. Մ.

կանով։ Ներումն դրամական հատուցումներ, որոնք նշանակվում են վարչական ճանապարհով, արտօնութիւններ անտառներ ոչնչացնողներին, մանկներին գանձարանի դրամական պատասխանատուութենից ազատութիւն, թոյլտուութիւն թափառականներին վերադառնալ իրանց բնակութեան տեղը և առհասարակ Եւրոպական Ռուսաստանը։ Հասարակութիւնների վճռով վարչական ճանապարհով աքսորվածները պէտք է վերադառնան երեք տարուց յետոյ բնակվելու օրից աքսորի տեղը, քաղաքական յանցաւորների վիճակը թեթևացնվում է։ Ներման իւրաքանչիւր յօդուածի սահմանները և բացառութիւնները խստութեամբ որոշված են։ Մանիֆեստի հիման վրա դատից և քննութիւնից ազատվածները, համոզված լինելով իրանց անմեղութեան մէջ և ցանկանալով արդարանալ դատաստանի առաջ, պէտք է յայտնեն վեց ամսվայ ընթացքում։ Կասկածները, որոնք կարող են ծագել, վճռում է սենատը, իսկ նրա իշխանութենից վեր եղած դէպքերում թագաւոր կայսրը։ Ֆինլանդիայի արտօնութիւնների և ներումների մասին առանձին որոշումն կը հրատարակվի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունիսի 15—30-ից սկսած մինչև սեպտեմբերի 1-ը պատուիրողներին 30% զիջում կը լինի։
Կանանց զերձակ Գրիգոր Անիեանց և ընկ. Գանձակի փողոց տ. № 10-ը։
2—4

Փ. ՌԷԿՈՒՆՕՎԻՆ Փ. ԿՕԿ-ՉԱԵՎԻՆ եւ ԸՆԿ.
Առևտրական տան պահանջմամբ, Ադրբեջան գիւղերում գտնվող բոլոր գիւղացիներին՝ ՇԱՔԱՐԻ վճարումը Օդեսայի ԱՌԻՒՆ "Գէրման և Կիւնտ" շոգեկառքի և նաւերի մասին։
2—3

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ
Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։
Միակ գործակատեղը կան ամենրի համար մեծ ԳՐԻՉՆԵՐ էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔ, ներ, զմուռ, ՄԱՐԻՉներ, պենալ, ներ, ծխախոտի ներ, ածելիք, ներ, ԲԱՋԿԱԹՈՌ-բարկու կախելու տիներ, վզազօտի բանալիներ, ՊԱՀԵՍՏՈՒՄ, Ադրբեջանական գրիչներ, Դպրոցական գրիչներ (մեծ քանակութեամբ) Խառնոց 4 գրիչում վաճառում Բրօքգաուզ բարձրագոյն ԱՒԱՐԻ "Գէրման և Կիւնտ" Օդեսայի ՄԱՅԱՐՕՆՆԵՐԻ։
2—3



ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։ Նոյն տեսակ ձեռագրեր ծանկութեամբ ամեն ձևի 25% ուրիշ տեղ։ Կաթուղթ, տետրակներ, քարեգրիչներ, քսակներ, ամաններ, մկրատներ, խալիչաներ, ՄԱՀՃԱԿԱԼ, վեն համար իրեր, գօներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրան, շվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօակա, գլխի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենաօշներ։ Բժշկական թուղթ վատերկլօզետի համար և այլն և այլն։
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։
21—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԹԷՑԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ր. 10 կ.	թէյի հետ ամեն տեղ	1 ր. 30 կ.
1 „ 20 „	. . . . .	1 „ 60 „
1 „ 40 „	. . . . .	1 „ 90 „
1 „ 60 „	. . . . .	2 „ 20 „
1 „ 80 „	. . . . .	2 „ 50 „
ամենալաւը 2 ր.	. . . . .	3 „ ——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաօ-ֆրայ էսսենցիայի, Պալմերի բիսկվիտների, Բազրի կօնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Տուրնեբի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի բէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամաններ, Կոլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալբոմներ և այլն և այլն։
96—100

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ 1883 թվի յունիսի 4-ին, ցերեկվայ 12 ժամին, վարչութեան ներկայութեամբ աճուրդ է նշանակված կապալով տալու համար քաղաքի փողոցային 1655 հատ լապտերների ֆոտոգէնով լուսաւորութիւնը։ Ներկայ տարվայ յուլիսի 14-ից մինչև երկու տարի ժամանակամիջոցով։ Պայմանները կարելի է տեսնել Քաղաքային վարչութեան կանցէլարիայում ամեն օր մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, բացի տօն օրերից։
2—3

ВЪ РЕДАКЦІИ
ГАЗЕТЫ „МШАКЪ"
ПРОДАЕТСЯ БРОШЮРА
НА РУССКОМЪ ЯЗЫКѢ
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."
Цѣна 25 копѣекъ.
Соч. Григорія Арцруни.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԳՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ հողի մի քանի կտորներ ծախվում են էժան Նաբէրէժնայա փողոցի վրա, ոչ հեռու նոր կամուրջից։ Հարցնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ։ Նոյն տեղը բօմազէյի տղամարդկանց և կանանց թամբեր և գանազան ուրիշ ապրանքների մեծ ընտրութիւն ծախվում են շատ էժան։
3—10

Հոգաբարձութիւն Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրանոցի հրաւիրում է նոյն դպրանոցի համար տեսուչ. ցանկացողը այդ պաշտօնը յանձն առնլոյ, թո՛ղ բարեհաճի իւր յօժարութիւնը գրաւոր առաջարկելու հոգաբարձութեան մինչև գալոց յունիս ամսոյ 20-ն։

Տեսուչը համարվում է միևնոյն ժամանակ անդամ հոգաբարձութեան և նախագահ մանկավարժական ժողովի և նրա պարտաւորութիւնն է հսկել դպրանոցի ուսումնական և տնտեսական ներքին բարեկարգութեան և յառաջադիմութեան մասին։

Տեսուչը պիտի լինի համալսարանական ուսումն ստացած և հմուտ հայկական լեզուի գիտութեան և ունենալու է դպրանոցում աւանդուող մի որ և է առարկայից շաբաթական 10—12 դաս։

Տեսչին նշանակած է ռոճիկ դասերի վարձով միասին 3000 ր. տարեկան։

Ցանկացողը կարող է ստանալ դպրանոցի տպած կանոնադրութիւնը։

ԳԱԼԵՐԷԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴԱՐՑՕՎԱՑԱ ՓՈՂՈՑ
ՊԱՀԵՍՏ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.
СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիէննայի ԹՕՆԷՔ ֆաբրիկայի ՄԷԲԵԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՑԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, Բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, ԹՈՒՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմալով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՔԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, գանազան աթոռներ 35 բուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաչելի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոգաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակավայժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՁԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ր. 50 կ.—30 ր.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուրթներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ր., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՑԵԼԻՆԵՐ 9 ր., տուալէտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., գանազան մետալների մոմակալներ 1 ր.—15 ր., սեղանի դգալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի դգալներ ֆրաժէի, մելխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղեր 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ գանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրօններ րէվոլվերների համար, հրացան 6 ր. և աւելի, գանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ր. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 Ֆ. թէց Պոպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի գանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.
25—100

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԷՔԻԱԹՆԵՐԻ
ԵՐԿՐՈՐԴ գիրքը։—Գինն է 30 կոպ.

Վաճառվում է բոլոր հայոց գրավաճառների մօտ և Երևանում պ. Ն. Սիմէօնեանցի գրախանութում։

Մամուլի տակից շուտով լոյս կը տեսնի Հայ-ժողովրդական աւանդութիւններ անունով գիրքը, որ բովանդակում է իր մէջ—հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, անէծքներ, օրհնութիւններ, երդումներ և այլն։

Ինձ նիւթ ուղարկող պարոնները տպագրուած գրքերից մի մի օրինակ նուէր կը ստանան։

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. Тиграну Навасартянцъ.

Տ. Նաւասարդեանց.
3—3

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ մի և նոյն տեղը ԹԻՆԱՅԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն։
18—100

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Мая 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.